ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՒ ՍԱՀԱԿ Բ. ԽԱՊԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԻՆ աշխարհամարտի տարիներին իրագործվեց հայերի զանգվածային ոչնչացման՝ ցեղասպանության քաղաքականությունը, որի արդյունքում արեւմտահայությունը ոչ միայն ենթարկվեց կոտորածի, այլեւ զրկվեց իր դարավոր հայրենիքից եւ ինչպես Կիլիկիո Սահակ Բ. կաթողիկոսն է մատնանշում՝ «իր դարաւոր հայրենի հողէն խլուելով «կալի մղեղներու պէս» փշուր-փշուր տարածվեց աշխարհի ծովերում ու ցամաքներում[1]։

Աշխարհամարտի նախօրյակին Սիսում տիրում էր խաղաղ եռուզեռ։ Վերելք էր ապրում կրթամշակութային եւ եկեղեցական կյանքը։ 1914 թ. մայիսի 1-ին եպիսկոպոսական ձեռնադրության եւ մյուռոնօրհնեքի կապակցությամբ Սիս էին ժամանել հազարավոր ուխտավորներ։ Սիսը «Հայաստանի մայրաքաղաքի կերպարը առած էր բնակչությամբ ու հանդէսներով»[2]։

Մինչ հուսահատ եւ վշտեբեկ հայրապետը Ադանայի 1909 թ. կոտորածներից հետո աշխատում էր գոնե ազգային միջոցներով «սրբել անթիւ այրիներու եւ որբերու արցունքները»[3], դպրոցներ եւ որբանոցներ հաստատել Մայրավանքում, բռնկվեց Առաջին աշխարհամարտը։

---

[1] Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, *Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914–1972), Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 35։*

[2] Ս. ԹԵՐԶԵԱՆ, *Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը, Աթենք, 1937, էջ 49։*

[3] Մ. ՔԷԼԷՇԵԱՆ, *Սիս-Մատեան. պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 278։*

Ընդհանրապես, Սահակ կաթողիկոսի պաշտոնավարման առաջին ժամանակաշրջանը՝ մինչեւ 1921 թ., լի է դժբախտություններով, կոտորածի եւ տարագրության սրտաճմլիկ դրվագներով[4]։

Պատերազմի սկզբին սսեցիներից շատերը գտնվում էին իրենց ամառանոցներում։ 1914 թ. հուլիսի 21-ի (օգոստոսի 3) գիշերը Սսի բերդի վրա հսկայական մի խարույկ բոցավառվեց, որ յուրօրինակ մի ահազանգ էր քաղաքի հայ ազգաբնակչության համար։ Վերջիններս սոսկումով վերադառնալուց հետո շինությունների պատերին տեսան փակցված հայտարարություններ «սեֆեր-բերլիկի»՝ զորահավաքի վերաբերյալ, որն ինչպես այլուր, այնպես եւ Կիլիկիայում, իրականացվեց մեծ աճապարանքով եւ քաղաքը զրկվեց ինքնապաշտպանության ունակ բնակչության զգալի մասից։

Արդեն 1914 թ. սեպտեմբերին Հալեպի կուսակալ Ջելալ բեյը, որը Կարինում, Բաղեշում, Տրապիզոնում եւ Կ. Պոլսում ուներ շատ հայ բարեկամներ եւ աշակերտներ, Հալեպի Ազգային առաջնորդարանի միջոցով Սահակ Բ. կաթողիկոսին ուղղված իր նամակում տեղեկացնում էր, որ զեյթունցի հայ դասալիք զինվորներն իբր սնունդ եւ փամփուշտ հայթայթելու նպատակով գիշերային հարձակումներ էին կազմակերպում եւ թալանում շրջակայքի թուրքական գյուղերն ու ագարակները։ Ուստի Հալեպի Զինվորական Արտասովոր հրամանատարությունը, որ կազմավորվել էր Զեյթունի 1895 թ. դեպքերից հետո, կուսակալի միջոցով խնդրում էր «հոգեւոր Պետ Սիսի Կաթողիկոսէն, որ գործակցաբար այս խնդիրը յորդորական եւ անոյշ միջոցներով կարգադրուի եւ զինուորական շարժումի մը առաջքը առնուի»[5]։

Նույն խնդրանքով կաթողիկոսին են դիմում նաեւ Հալեպի հայ երեւելիներ, նահանգային ժողովի անդամ՝ Գարեգին Ճիյերճյանը եւ «Օթել Պարոն» հյուրանոցի սեփականատերեր Մազլումյան եղբայրները, որոնք հույս էին հայտնում, որ Ուլնիայի, Մարաշի, Այնթապի, Քիլիսի եւ Կիլիկիայի հայաբնակ մյուս վայրերի մեջ «անհաճոյ դէպքերու ծագումին առիթ չտրուելու համար՝ անհամբերութեամբ կը սպասէ շրջահայեաց ու բարեացակամ Վալի ճելալ Պէյը»[6]։

---

[4] *Ավելի հանգամանորեն տե՛ս «Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ» (պատմական համառոտ ակնարկ), Առանձնատիպ «Էջմիածին» ամսագրի (1959, NN Ը.-Թ., Ժ., ԺԱ., ԺԲ. եւ 1960, NN Բ., Գ.), 1960, էջ 27։*

[5] *«Ատանայի հայոց պատմութիւն», Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 318։*

[6] *Ն. տ., էջ 318։*

1914 թ. աշնանը, երբ Օսմանյան Թուրքիան դեռ չէր մտել պատերազմի մեջ, զորակոչիկների շրջանակներում «զինուորական փախստականներ» փնտրելու պատրվակով Զեյթունի մյութեսարիֆը ձերբակալում է Զեյթունի ավագանու եւ հոգեւորականության 50 ներկայացուցիչների, որոնց մեջ էր նաեւ Հովհաննես վրդ. Գարանֆիլյանը[7]։

Այս լուրն ստանալուն պես Սահակ Բ. Խապայանը Ադանայից մեկնում է Հալեպ, (որը Զեյթուն-Մարաշ-Այնթապ շրջանի կուսակալության կենտրոնն էր) եւ հաստատվում քաղաքի Սալիբայի քրիստոնեական պարսպապատ թաղամասում, ուր գտնվում էին Ս. Քառասուն Մանկունք Հայոց Մայր Եկեղեցին եւ Առաջնորդարանը։ Նա տեսակցում է Հալեպի նահանգապետ (վալի) եւ Սիրիայի թուրքական զորաբանակի ընդհանուր հրամանատար Ահմեդ Ջեմալ փաշայի հետ, որին համարում էր «պարկեշտ եւ հայախնամ պետական մարդ»[8]։

Հանդիպմանը մասնակցում են նաեւ Հալեպի թուրքական զորքերի հրամանատար գնդապետ Շիֆրեի դիվանապետը եւ հայոց առաջնորդարանի փոխանորդ Տ. Եսայի ավագ քահանան[9]։ Դասալիքների խնդրի վերաբերյալ երկու կողմերը համաձայնում են մշակել ընդհանուր մի նախագիծ, որի կատարումը դրվում է Զինվորական Արտասովոր հրամանատարության վրա եւ հրահանգի կատարման մասին տեղյակ պահվում ինչպես Մարաշի կառավարչին, այնպես եւ Մարաշի ու Ուլնիայի Հայոց առաջնորդարաններին[10]։

Զեյթունում հոգեւոր հովիվ նշանակված Խաչատուր ծ. վրդ. Տեր-Ղազարյանին ուղղված իր 1914 թ. սեպտեմբերի 21-ի նամակում Սահակ կաթողիկոսը լիահույս էր, որ Ջեմալի «Ուլնիոյ խնդրոյ բարւոք վերջաւորութիւն մը տալ է իր փափաքը։ Կը յուսամ թէ փափաքելի եղանակաւ մը գործը կը կարգադրուի»[11]։

Սահակ Խապայանը եղելության մասին Ադանայից տեղեկացնում է նաեւ Պոլսի Հայոց պատրիարքին, ավելացնելով, որ Զեյթունի չարանենգ մյութեսարիֆը, վերադառնալով Մարաշ, իր հետ բերել էր հայ

---

[7] Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, *Ժամանակակից պատմութիւն...*, էջ 40։

[8] Ն. տ.։

[9] *Հալեպի Սալիբայի քրիստոնեական թաղամասը հիմնվել էր դեռեւս խաչակիրների տիրապետության շրջանում։*

[10] *Մարաշի առաջնորդ Տ. Մկրտիչ արք. Վեհապետյանը վախճանվել էր, որի փոխարեն Առաջնորդական տեղապահ էր նշանակվել Տ. Հովհաննես ավագ քահանան։ Իսկ Ուլնիայի Առաջնորդարանի տեղապահ Տ. Հովհաննես վրդ.-ը՝ Մարաշի կառավարչի պահանջով տեղափոխվել էր Հալեպ, իսկ նրա տեղը նշանակվել էր փորձառու Տ. Խաչատուր ծ.վրդ. Տեր-Ղազարյանը. տե՛ս «Ատանայի հայոց պատմութիւն», էջ 319։*

[11] Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, *Ժամանակակից պատմութիւն...*, էջ 40։

կալանավորներ, որոնց պիտակավորելով որպես «էտէպսիզներ, խայլըններ, ալչագներ», թուրքական խուժանին կոչ էր արել հաշվեհարդար տեսնել նրանց հետ։ Նրա նպատակն էր հայերին ընդդիմության մղել եւ ներկայացնել որպես ապստամբներ, եւ իբր, եթե հայերն ազատ արձակվեին, գավառի անդորրությունը պիտի խախտվեր։

Միաժամանակ նա կոչ էր անում Զեյթունի հայ ազգաբնակիչներին լինել զգույշ, համբերատար եւ շրջահայաց ու պատրվակ չստեղծել զինվորական միջամտության համար։

Կոստանդնուպոլսի պատրիարքին հասցեագրված իր հաջորդ՝ սեպտեմբերի 27-ի նամակում նա հավաստիացնում էր, որ ինքը բոլոր հնարավորությունները գործադրելու է «այդ ճիւաղը (խոսքը՝ Մարաշի կառավարչի մասին է.– Վ. Հ.) պաշտօնանկ ընել տալ...», հակառակ դեպքում պատրաստակամություն էր հայտնում հրաժարվել ե՛ւ պատրիարքությունից, ե՛ւ կաթողիկոսությունից, որովհետեւ «...ո՛չ զէյթունցիք, ո՛չ մարաշցիք եւ ո՛չ նոյնիսկ շրջակայից կիլիկեցիք անդորր կեանք պիտի ունենան, եւ ո՛չ ալ թուրք հայրենակիցները համերաշխ վերաբերում պիտի ունենան, Կիլիկիոյ ընդհանուր Հայութիւնը լքումի ենթարկելով»[12]։

Կաթողիկոսը Ջեմալին առաջարկում է «դատավարութիւնը» Մարաշից տեղափոխել Հալեպ՝ կանխատեսելով այդ ամենի աղետալի հետեւանքները։

Բացի այդ, նահանգապետի հետ խորհրդակցելով, նա հեռագրում է Կ.Պոլսի կենտրոնական կառավարությանը «յուսադրուած պետական արդարութենէն»[13]։

Երկու օր անց Հ. վրդ. Գարանֆիլյանը Ս. Խապայանի միջնորդությամբ երեք կալանավորների հետ միասին Մարաշի բանտից տեղափոխվում է Հալեպ, իսկ հետո Սիս՝ «վանքի մեջ արգելափակուած» կարգավիճակում։

Իրավիճակը գնալով լարվում է Մարաշում եւ Զեյթունում։ Դաժան ծեծի ենթարկվելով՝ սպանվում է նշանավոր գործիչ Նազարեթ չավուշ Ենիտունյանը, որի գերեզմանը դրվում է զինվորական հսկողության ներքո։ Զեյթունի 27 հայկական գյուղերը ենթարկվում են ավերածությունների, թալանի։ Նրանց պարտադրվում է 25 օր շարունակ հոգալ 1600 հոգանոց թուրքական զորամիավորման պարենի խնդիրները։

---

[12] *Անդ, էջ 41։*
[13] *Անդ, էջ 40։*

Շարունակվող անարդարությունները եւ իշխանությունների անտարբերությունը Սահակ կաթողիկոսի մեջ արթնացնում են այն կասկածը, որ այն, ինչ որ կատարվում է Կիլիկիայում «Կեդրոնի հրամանով» է եւ, որ բնաջնջման քաղաքականությունը պետական հրահանգ է։

1914 թ. նոյեմբերին կաթողիկոսը Հալեպից տեղափոխվում է Բեյրութ, այնտեղից՝ Մերսին եւ Ադանա, որտեղ Ս. Աստվածածին Մայր Տաճարում, կիրակի օրը Ադանայի նահանգապետ՝ Իսմայիլ Հագգը բեյի, ոստիկանության ընդհանուր հրամանատար եւ պատերազմական ատյանի նախագահ՝ Ավնի բեյի ու քաղաքային պետական պաշտոնյաների ներկայությամբ հանդիսավոր մաղթանքներ է կատարում Օսմանյան բանակի հաջողության համար[14]14։ Եւ այդ քայլը, ինչպես կաթողիկոսն է նշում Կ. Պոլսի պատրիարքին ուղղված իր 1914 թ. նոյեմբերի 14-ին նամակում, ոչ միայն գոհացնում է վալիին, այլեւ «ավելի ամրապնդեց համերաշխութեան այն արժէքաւոր կապը որ արդէն գոյութիւն ունի նահանգիս թուրք եւ հայ ազգաբնակչութեան մէջ»[15]։

Սահակ Խապայանն իր սրտում վատ կանխազգացումներ ուներ համաշխարհային պատերազմի արհավիրքների հետ կապված։ Նա 1914 թ. դեկտեմբերի 11-ին ժամանում է Հաճն՝ ներկա գտնվելու Սահակ-Մեսրոպյան վարժարանի եւ առաջնորդարանի վերաբացմանը, ինչպես նաեւ Ս. Ծննդյան պատարագին, ջրօրհնեքին եւ այլ տոնախմբություններին («Իսահակայ Պարթեւի Հայրապետի», Գավառական, Քաղաքական, Կրոնական, Տնտեսական, Վանական ժողովները) մասնակցելու համար։ Իր մեկնելու նախօրյակին՝ փետրվարի 11-ին, վեհափառը խոստովանում է. «Կեանքիս մէջ երբեք այսքան փառաւոր տօնախմբութիւն կատարած չէի, պիտի չմոռնամ այսօրուան յիշատակը, ուրախ եմ, չափազանց ուրախ եմ, բայց կը վախնամ որ մեր այս ուրախութիւնը տխրութեան չփոխուի, որովհետեւ համայն աշխարհ սեւ ամպերով պատած է...»[16]։

Իսկ երբ տոնախմբությունները կատարելուց հետո փետրվարի 19-ին հրաժեշտ է տալիս Հաճնի առաջնորդ Պետրոս եպս. Սարաճյանին ողջագուրվում եւ արտասվում է։ Սարաճյանի այն հարցին թե. «Վեհափա՛ռ, ուրիշ անգամ ալ եկած ու մեկնած էք, բայց մեկնման ատեն չէք լացած, ինչո՞ւ այս անգամ կու լաք»,– Խապայանը պատասխանում է.

---

[14] *«Ատանայի հայոց պատմություն», էջ 320։*

[15] Բ. Եղիազեան, *Ժամանակակից պատմութիւն..., էջ 42։*

[16] Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, 1990, էջ 917։*

«Չեմ գիտեր, գէշ նախազգացումներ ունիմ, կը կարծեմ թէ այս վերջին անգամն է, որ հրաժեշտ կուտամ Հաճընի, չեմ գիտեր, չեմ գիտեր... մնաք խաղաղութեամբ, Աստուած համբերութիւն եւ կարողութիւն տայ ամենուս»[17]։ Յավոք կաթողիկոսի կանխազգացումները ճիշտ էին։

Սահակ Բ.-ի հաշտվողական քաղաքականությունը եւ ռազմաճակատներում թուրքերի կրած անհաջողությունները մի պահ կարծես մեղմացնում են կառավարության վերաբերմունքը Ուլնիայի մեջ։ Մարաշում բանտարկված 60 զեյթունցիներից 19-ն ազատ են արձակվում։ Այս եւ նմանատիպ փաստերը Սահակ Բ.-ի մոտ այն աստիճան են հույս արթնացնում, որ նա Զեյթունի կաթողիկոսական փոխանորդ Խաչատուր վարդապետին նույնիսկ խորհուրդ է տալիս զգուշանալ հայ դասալիքներին ապաստան տալու կառավարական ամբաստանություններից, «որով առիթ կը տրուի կառավարութեան կողմէ խստութիւններ գործադրելու»[18]։

Չնայած Սահակ Խապայանի պարտադրանքով փոխվում է Մարաշի մյութեսարիֆը եւ Զեյթունի նոր կայմակամ է դառնում Հաճնի կայմակամ Հիլմի բեյը, այդուհանդերձ չի փոխվում իշխանությունների վերաբերմունքը Զեյթունի հայության նկատմամբ, քանի որ կար կասկածանք առ այն, որ «Զէյթուն միշտ ըմբոստ է»։

Խոսելով Զեյթունում կատարվող դեպքերի մասին՝ Սահակ Խապայանը Գյուտ եպիսկոպոսին գրած իր 1915 թ. փետրվարի 25-ի նամակում նշում է. «...ըստ իս ամենքն ալ պատճառանքներ են, իրականութիւնն է, որ կառավարութիւնը խիստ միջոցներու պիտի դիմէ, որոնց հետեւանքը իր բովանդակ արհավիրքներով կրնանք ըմբռնել»[19]։

Եւ ահա Ջեմալ փաշան իրավիճակը «հանդարտեցնելու» նպատակով Ուլնիայի շրջանում «պաշարման վիճակ» է հայտարարում եւ հրամայում է պահել զինվորական խիստ հսկողության տակ։ Այդ մասին իմանում ենք Ա. Ջեմալ փաշայի Սահակ կաթողիկոսին ուղղված 1915 թ. մարտի 10-ի հեռագրից, որտեղ նա տեղեկացնում էր. «Զինուորական փախստականները պիտի հետապնդուին, խաղաղ ժողովուրդին ոչ մէկ վնաս կամ վտանգ կայ, բայց որպէսզի զգուշանան հարկ է որեւէ կերպով օժանդակութիւն չընեն հետապնդուելիք փախստականներուն...»[20]։

---

[17] Բաբգէն Ա. կաթողիկոս, *նշւ. աշխ.*, էջ 917։

[18] Բ. Եղիազեան, *Ժամանակակից պատմութիւն...*, էջ 42–43։

[19] *«Կիլիկեան կսկիծներ. վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն 1903–1915»*, Պէյրութ, 1927, էջ 55։

[20] Բ. Եղիազեան, *Ժամանակակից պատմութիւն...*, էջ 42–43։

Սահակ կաթողիկոսն իր պատասխան հեռագրում հայտնում է, որ ինքը հրահանգել է ժողովրդին, որ իրենց առօրյա գործերով զբաղվեն։ Միաժամանակ նա Ա. Ջեմալին իր ցանկությունն է հայտնում մեկնել Զեյթուն՝ տեղում կացությունը հսկելու համար։ Սակայն Ա. Ջեմալն իր երկրորդ հեռագրով անհարկի է համարում, որ կաթողիկոսն անձամբ «յոգնութիւն յանձն առնէ մինչեւ Զէյթուն ճանապարհորդելու»[21]։

Կաթողիկոսը դեռ նոր էր հասել Սիս, իսկ այնտեղից Ադանա, երբ եկեղեցական թեմերից լուրեր են տարածվում Կիլիկիայում անօրեն կերպով տարագրություններ կատարելու վերաբերյալ։ Այն արեւմտահայ տարագրության առաջին հրահանգն էր, որն սկսում էր գործադրվել Զեյթունի շրջանից։

Այդ առիթով ուշադրության արժանի է հետեւյալ փաստը։ 1915 թ. սկզբներին Ադանայում գտնվող մի բարձրաստիճան թուրք պաշտոնյա իր մտերիմ հայ վաճառականին հայտնում է, որ «Հայոցդ գլխուն կրկին նոր փոթորիկ մը պիտի պայթի, որը պիտի գերազանցէ ցարդ բոլոր պատահածները... ամբողջ հայերը տեղահան պիտի ըլլան եւ հարստութիւնին պիտի գրաւուի, նոյնիսկ ձեր կիներն ու աղջիկները ձեզի չի պիտի մնան... ես քիչ կըսեմ, դուն շատ հասկցիր... սա տեղէն ժամ առաջ հեռացիր, որպէսզի գալիք փոթորիկին մեջ դուն ալ չը խեղդուիս»[22]։

Հայ վաճառականը մինչ Կիլիկիայից հեռանալն այդ մասին տեղեկացնում է Սահակ կաթողիկոսին, որն էլ իր հերթին հանդիպում է Կ. Պոլսից վերադարձող Ջեմալ փաշային եւ խնդրում ճշտել տեղեկությունը։ Վերջինս հայտնում է, որ նախարարական նիստերում ինքն առաջարկել է խղճալ ու տեղահան չանել ողջ հայ ժողովրդին, այլ բավարարվել միայն կուսակցությունների ու մտավորականության ներկայացուցիչներին մեկուսացնելով, բայց իր առաջարկը մերժվել է մեծամասնության կողմից[23]։

Նույն թվականի մարտի սկզբին Սահակ կաթողիկոսը հատուկ հանձնարարությամբ Կ. Պոլիս է ուղարկում մի հայ վաճառականի՝ գույժը պատրիարքին հայտնելու համար։ Այդ առիթով նա 1915 թ. մարտի 2-ին նամակով դիմում է Զավեն պատրիարքին՝ տեղեկությունները

---

[21] *Անդ, էջ 43–44։*

[22] Գ. Պալաքեան, *Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Բեռլինէն դէպի Զօր, հտ. Ա., Վիեննա, 1922, էջ 71։ Տես նաեւ* Ս. Սաղբրեան, *Կէսդարեան յուշամատեան (1895–1945), Փարիզ, 1948, էջ 74։*

[23] Գ. Պալաքեան, *նշւ. աշխ., էջ 72։*

հստակեցնելու համար։ Զավեն Պատրիարքն իր հերթին դիմում է Գերմանիայի դեսպանին՝ պարզաբանում խնդրելով, սակայն գերմանական դեսպանատունը հավաստիացնում է, որ տարածվող լուրերն իրականությանը չեն համապատասխանում[24]*։*

Հայության տարագրության խնդիրն առավել է բարդանում այն բանից հետո, երբ անգլիական «Doris» հածանավը դուրս գալով Իսքենտերունից գիշեր եւ ցերեկ ծովային շարժընթացներ է իրականացնում Փայաս, Դյորթ-Յոլ, Այաս եւ Քարաթաշ նավահանգիստների մոտակայքում։ Դյորթ-Յոլի առաջնորդական փոխանորդը Տեր Մեսրոպ քահանա Էսեֆյանը եւ երկու ազգային երեւելիներ, մեկնելով Ադանա, Սահակ կաթողիկոսին հայտնում են, որ տեղի կայմակամը հաշվի առնելով անգլիական զորքերի ափ իջնելու հավանականությունը Կիլիկիայում, հրահանգել էր ծովափնյա շրջանի մահմեդական գյուղացիներին տեղափոխել Ամանոսի լեռներ։ Հայերին էլ նա առաջարկում է առժամանակ եւ «...ինքնաբերաբար քաշուիլ դէպի այդ շրջանները, որպէսզի դաշտային հողամասը ապահով ըլլայ,– ավելացնելով,– եթէ կամովին չհեռանաք՝ կենթադրեմ որ կը բռնադատուիք պետական ոյժով տեղահանելու...»[25]*։*

Ս. Խապայանը, զգուշանալով հետագա անխոհեմ քայլերից, պատվիրակներին հրահանգում է անմիջապես հետ վերադառնալ Դյորթ-Յոլ եւ կայմակամին տեղեկացնել, որ տեղափոխման նախապատրաստական աշխատանքներ սկսեն։

Ինչպես Արեւմտյան Հայաստանի մյուս երկրամասերը, Կիլիկիան եւս զերծ չմնաց կատարվող բռնություններից[26]*։ Ինչպես Գեւորգ Ե. Ամենայն Հայոց կաթողիկոսն է տեղեկացնում Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին ուղղած ապրիլի 7-ի իր նամակում 1915 թ. սկզբներից սկսվեցին «բռնությունները, կոտորածներն ու սպանությունները Կիլիկիայում»*[27]*։*

Այդ մասին Սահակ Բ. Խապայանը Ադանայից Զավեն արքեպիսկոպոսին ուղղված իր 1915 թ. ապրիլի 8/21-ի նամակում հայտնում էր.

---

[24] ԲԱԲԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ, *նշւ. աշխ., էջ 918։*

[25] *«Ատանայի հայոց պատմութիւն», էջ 320։*

[26] *Կիլիկիայի հայկական կոտորածների մասին ավելի մանրամասն տե՛ս* Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, *Հայկական կոտորածները Կիլիկիայում (*XIX *դարի 90-ական թթ.-1921 թ., Երեւան, 2005, էջ 95–123։*

[27] «Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов», Ереван, 1982, с. 278

«Ձեզ պետք է, որ արդեն հայտնի լինի, թե ինչպես նա (խոսքը Զեյթունի մյութասարիֆի մասին է.– Վ. Հ.), մեղավորներին պատժելու փոխարեն, դաժան վերաբերմունք է ցուցաբերում անմեղների, նույնիսկ կանանց եւ երեխաների հանդեպ, գործադրում ճնշման միջոցներ եւ անարգում նրանց։ Որոշ կանայք դաժան վերաբերմունքի հետեւանքով վիժել են, իսկ մի քանի բանտարկյալներ՝ զրկվել իրենց մարմնի տարբեր մասերից։ Պետական պաշտոնյաները ծաղրում են մեր հավատը եւ հայհոյում պատիվը։ Ձեզ պետք է, որ արդեն հայտնի լինի, թե ինչպես մյութասարիֆը Մարաշ բերել տվեց ոչ միայն հանձնված 25 դասալիքների, այլեւ խաղաղ ժողովրդի միջից բազմաթիվ անմեղների, որոնց հետ դաժանորեն վարվեց... Զեյթունի կայմական Հուսեյն Հյուսնի, ֆելդվեբել Սուլեյման բեյի, մուֆտիի եւ պետական պաշտոնյաների չլսված ոճրագործություններն ու դաժան գործողությունները, որոնք միայն գցում են կառավարության հեղինակությունը, նպատակ ունեն խաղաղասեր ժողովրդին հասցնել ծայրահեղության, որպեսզի կառավարությանն առիթ տան նրան բնաջնջելու... Ոչ ոք ականջ չի դնում խեղճ ժողովրդին, եւ այս վիճակը շարունակվում է։

Կանայք փորձեցին իրենց սրտակեղեք վիճակը հեռագրով նկարագրել Վալիդե սուլթանուհուն՝ կայսրուհի մորը, որ գութ հայցեն։ Քանի որ իշխանությունը մերժեց նրանց այդ բանը անել, նրանք ենթադրեցին, թե այստեղ մեղքը համայնքի առաջնորդինն է եւ բողոքի ցույց արեցին։

Մի քանի դասալիքներ, որոնք փախել էին լեռները, փորձեցին բնակչությանը ոտքի հանել կազմակերպված ապստամբության։ Սակայն խաղաղասեր ժողովուրդը նրանց չհետեւեց... դասալիքների փախուստից հետո իշխանություններից խնդրեցին խնայել վանքը, որը ողջ հայ ժողովրդի սեփականությունն է, որտեղ պահպանվել էին շատ թանկարժեք իրեր եւ սրբություններ։ Կայմակամը, մուֆտին եւ մյուս պաշտոնյաները խոստացան խնայել, սակայն զինվորականությունը հաշվի չառավ այն, վանքը կրակի մատնեց։

Ես նույնպես, որպես կաթողիկոս, Զեյթունի բնակիչներին միշտ խորհուրդ եմ տվել հավատարիմ մնալ կայսրությանը եւ կատարել պետության հանդեպ իրենց քաղաքացիական պարտքը... Իմ 12-ամյա ծառայության ժամանակամիջոցն ինձ համար եղել է դառնության եւ վշտի հավերժ ժամանակ։ Եթե քրիստոնյա չլինեի, կանիծեի այն օրը, երբ լույս

աշխարհ եկա, կամ ավելի շատ այն օրը, երբ նշանակվեցի այս ծանր, պատասխանատու գործին»[28]։

Հաղորդումը գերմաներեն թարգմանությամբ ուղարկվում է նաեւ Ադանայի գերմանական հյուպատոսարան[29]։

Շուտով ամեն ինչ պարզ դարձավ, երբ ապրիլի 11/24-ին բազմաթիվ մտավորականներ ձերբակալվեցին եւ տարագրվեցին Զանկը, իսկ Զեյթունից բազմաթիվ ընտանիքներ աքսորվեցին Գոնիայի Սուլթանիե գավառ։ Ի դեպ հենց աքսորի ճանապարհին Սահակ Բ. Խապայանը հանդիպում է դոկտ. Տաղավարյանին, Գրիգոր Զոհրապին եւ Վարդգեսին[30]։

Տարագրության առաջին արհավիրքը Սիսը զգաց մայիսի 1-ին, երբ քաղաք եկավ Ադանայի ոստիկանապետ Ադիլ բեյը՝ խուզարկություններ կատարելու նպատակով։ Խիստ հսկողության տակ առնվեցին 96 կասկածելիներ (ցուցակը կազմված էր «սիսեցի թուրքերու կողմէ»)[31], որոնց թվում էին կուսակցական գործիչներ՝ Պետրոս Աթմաճյանը, Կարապետ Նաջարյանը, Մինաս Մարթայանը եւ ուրիշներ։ Խուզարկություններ կատարվեցին ինչպես կասկածելիների բնակարաններում, այնպես եւ Մայրավանքում։

1915 թ. Սահակ կաթողիկոսը գտնվում էր Ադանայում, երբ Եղիշե արք. Կարոյանը նրան մի նամակով տեղեկացնում է մայիսի 1-ին Մայրավանքում տեղի ունեցած խուզարկության մասին, որի ժամանակ թուրք ոստիկանները մեծ աղմուկ էին բարձրացրել դպրոցի ներսի պատին գծագրված Հայաստանի քարտեզի պատճառով, որի տակ գրված էր «Vive l'Arménie!» *(«Կեցցե Հայաստանը».– Վ. Հ.)[32]։*

Խուզարկությունը ոչինչ չտվեց, բացի հնչակյանների պարզ անվանացանկի հայտնաբերումից։ Տասն օրից հետո կառավարությունն ստիպված եղավ ազատ արձակել 81 հոգու, իսկ մնացած 15-ն ազատվեցին միայն տարագրության ուղին բռնելու պայմանով։

Այդ օրերին էր նաեւ, որ Կ. Պոլսից Պաղեստին մեկնող մի հայ բժիշկ, որը ծառայության էր անցել թուրքական զորաբանակում, Ադանայով անցնելու ժամանակ, Զավեն պատրիարքի հանձնարարությամբ,

---

[28] *«Գերմանիան եւ Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու», հտ. I, հրատարակությունը եւ ներածությունը դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, թարգմ. գերմ.՝ Վ. Մինասյան, Երեւան, 2006, էջ 153–158։*

[29] Ս. Ստեփանյան, *Յոհաննես Լեփսիուսը եւ Հայաստանը, Երեւան, 1998, էջ 23։*

[30] Բաբգէն Ա. կաթողիկոս, *նշվ. աշխ., էջ 919։*

[31] Մ. Քէլէշեան, *նշվ. աշխ., էջ 556։*

[32] *Նույն տեղում, էջ 278։*

ներկայանում է Սահակ կաթողիկոսին եւ տեղեկացնում, որ Կ. Պոլսում հրաման էր արձակվել ձերբակալել եւ զինվորական դատարանին հանձնել Ադանայի առաջնորդ Տեր Գեւորգ ծ. վրդ. Արսլանյանին (Ասլանյանին), միայն այն բանի համար, որ Ադանայում ձերբակալված հնչակյանների տներում հայտնաբերվել էին կուսակցության անդամ Ժիրայրի (Մարտիրոս Պոյաճյանի) եղբոր՝ նշանավոր գործիչ Մուրատի մասին պատմող եւ նրա լուսանկարով տպված մի քանի գրքեր։ Ադանայի նոր վալի (կուսակալ)՝ գնդապետ Իսմայիլ Հագգի հանձնարարությամբ Ադանայի Վարչական մեջլիսի (ժողովի) անդամ Ավետիս Կյուլպենկյանը Գ. Արսլանյանին հորդորում է որոշ ժամանակ «մեճլիսէն բացակայիլ» եւ անվտանգության համար Ադանայից դուրս հոգեւոր այցելություններ չիրականացնել։

Կուսակալը միաժամանակ իր մոտ հրավիրած կաթողիկոսական դիվանապետին «քաղաքավարի» հասկացնում է, որ Դյորթ-Յոլի գյուղերի 18–65 տարեկան հայ բնակչությունը կաթողիկոսի անմիջական հորդորներով ենթարկվի տարագրության զինվորական հրամանին եւ տեղափոխվի Դյորթ-Յոլից 50–60 կմ հեռու, Ամանոսի լեռներում գտնվող Թոփրակ-Կալե՝ ճանապարհների շինարարության վրա աշխատելու համար, որպեսզի «...այդ կերպով՝ երկսեռ ծերերու եւ մանուկներու եւս գիւղերէն հեռացուելու առիթ չտրուի»[33]։

Քանի որ Դյորթ-Յոլի տեղահանումն ու փախստականների ձերբակալումն իրականացվել էր առանց կաթողիկոսի հետ համաձայնեցնելու, ուստի Սահակ Բ.-ին այլ բան չէր մնում, քան Ադանայի Առաջնորդական փոխանորդ Տեր Արսեն ավագ քհն. Եմենիճյանին եւ Առաջնորդարանի դիվանապետին նույն օրն ուղարկել Թոփրակ-Կալե եւ Դյորթ-Յոլ՝ ժողովրդի կողքին լինելու համար։

Կիլիկիո հայ հոգեւոր պետերին չէր մնում այլեւս ոչինչ, եթե ոչ հանդես գալ բազմաթիվ նամակներով ու կոչերով, որոնք ուղղված էին թուրքական իշխանություններին։ Սահակ Խապայանն իր մեծ ու անգնահատելի վաստակն ունեցավ կիլիկիահայության պահպանման եւ նրանց բեկորների կյանքի ապահովման գործընթացում։ Նա մինչեւ 1915 թ. մայիսի 25-ը մնում է Ադանայում եւ բազմիցս իր բողոք-նամակներն է ուղղում կառավարությանը՝ ջանալով նրանցից օգնություն ստանալ, քանի որ մինչ այդ նա միամտաբար հավատացած էր, որ կատարվող

---

[33] *«Ատանայի հայոց պատմութիւն», էջ 322։*

հանցագործությունները, տեղական պաշտոնյաների ոճիրներն էին, եւ նա հույս ուներ, որ թուրքական կառավարությունը վերջ կտա դրանց։ Նա հանդիպում է Ա. Ջեմալ փաշային, ում պատասխանատվության ներքո էր տեղի ունենում հայ ժողովրդի աքսորահավաքը եւ վերջնական բնաջնջումը։ Նրա հետ որպես հին ծանոթի վիճում է, խոսում, այնուհետեւ բողոքագիր է ներկայացնում Կ. Պոլսի կենտրոնական կառավարությանը, կոչեր է ուղղում օտար հյուպատոսարաններին, որ վերջիններս տեղեկանալով եւ զարհուրելով հայերի նկատմամբ իրականացվող բռնություններից, դատապարտեն թուրքական իշխանություններին եւ վերջ տան կատարվող հանցագործությունները։ Սակայն Սահակ Խապայանի ամեն տեսակի հույսերն ապարդյուն էին։

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ կիլիկեցիներն այդքան շատ թվով զոհեր չտվեցին, սակայն կիլիկիահայերի մեծ մասը տարագրվեց իր հայրենիքից։ Տեղահանումներն սկսվեցին 1915 թ. գարնանը եւ իրականացվեցին Կիլիկիայի 16 քաղաքներում ու գյուղերում։

Հունիսի կեսերին 6000-անոց թուրքական բանակը մտավ Սիս, թեեւ «Սիսի երիտասարդութեան մեծ մասն արդէն զինուորագրուած էր, եւ անոնք, որ ազատ մնացած էին, այգիներն ու գլխաւորապէս ագարակները հունձքի մէջ էին։ Սիսի մէջ ապստամբութեան, կամ ինքնապաշտպանութեան որեւէ կարելիութիւն չկար։ Ոչ կանոնաւոր զէնք գոյութիւն ունէր, եւ ոչ ալ այդ ուղղութեամբ խորհելու փորձ կատարուած էր։ Սիսեցիներուն զէնքերը որսի նորագոյն զէնքեր էին եւ ատրճանակներ։ Այդ միջոցներով թրքական զորամասի մը դէմ ելլել ոեւէ մեկուն գլխէն իսկ չէր կըրնար անցնիլ»[34]։

Ջորքը ձեռնամուխ եղավ հայության տեղահանմանը։ Ամեն օր մունետիկը շրջում էր թաղից թաղ ու հայտարարում տեղահանվողների անունները։ Ամենամեծ քարավանը ճանապարհ ընկավ հունիսի 25-ին, իսկ մինչեւ հուլիսի 30-ը՝ ըստ անգլիական «Կապույտ գրքի», տեղահանվեցին 231 ընտանիքներ (1317 հոգի)[35]։

Մինչեւ հոկտեմբեր աքսորի ճանապարհը բռնեցին մոտ 3000–4000 սսեցիներ։ Արդեն սեպտեմբերի 3-ին դոկտոր Հ. Ջավրիեւը հեռագրում էր Ս. Սազոնովին, որ «Կիլիկիայից քշված է ողջ բնակչությունը»[36],

---

[34] Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, *Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը, Երեւան, 1965, էջ 331։*

[35] Մ. ՔԷԼԷՇԵԱՆ, *նշ. աշխ., էջ 572։*

[36] «Геноцид армян в Османской империи», с. 301.

իսկ հոկտեմբերին Զավեն պատրիարքը Պողոս Նուբար փաշային գրում էր. «Կիլիկեցիները ամբողջովին քշվել են դեպի Հալեպ, Դեր-Զոր, Դամասկոս»[37]։

Բնակչության հետ միասին տարագրության ուղին բռնեց նաեւ Մայրավանքի միաբանությունը։ Հետագայում Զավեն պատրիարքը Ամենայն Հայոց Գեւորգ Ե. Կաթողիկոսին ուղղած 1919 թ. մայիսի 12-ի իր նամակում պիտի տեղեկացներ, որ թուրքական «ոճրագործ կառավարությունը հայ ժողովուրդը իր արմատէն հարուածելու համար իր մահաբեր նետերը ուղղեց մասնայատուկ ճարտարութեամբ, հայ կրօնական... հաստատութիւններուն եւ քանդեց ու սրբապղծեց բոլոր ծաղկեալ ու գեղեցիկ վանքերը, եկեղեցիները եւ դպրոցները, գրաւելով եւ իւրացնելով բոլոր սրբազան անօթները ու սպասները»[38]։

Զարդի ժամանակ 4 քահանաներից 3-ն աքսորվեցին։ Երկուսը՝ Եզնիկ քհն. Թուրսարգիսյանն ու Հարություն քհն. Փափազյանը նահատակվեցին Տեր-Զորի անապատներում։ Կիրակոս քհն. Ներետեյանը հրաշքով փրկվեց մահից, ներգաղթի ժամանակ վերադարձավ Սիս, հովվեց իր ժողովրդին, իսկ 2 տարի հետո կրկին իր ձեռքը վերցրեց գաղթականի ցուպը։ Իսկ զառամյալ Ավետիս ավագ քհն. Աջապահյանը, որին թողել էին քաղաքում՝ չաքսորված հայության հոգեւոր կարիքները հոգալու համար, հանկարծամահ եղավ Ս. Աստվածածնի տոնին եւ թաղվեց նույն եկեղեցու բակում։ Թուրքերը նույնիսկ նրա աճյունը հանգիստ չթողեցին, գերեզմանը քանդեցին պատճառաբանությամբ, թե իբր հայերն այնտեղ զենք են պահել[39]։

Տեղահանության ժամանակ, թեպետ բողոքականներին չաքսորելու վերաբերյալ հրահանգ կար, սակայն այն թողնված էր տեղական իշխանությունների հայեցողությանը։ Ուստի տեղի թուրքական կառավարությունը որոշեց հեռացող քարավանների հետեւից ուղարկել նաեւ բողոքական հայերին։

Շուտով Սահակ Բ. Խապայանին մեկ այլ վատ լուր էր սպասում։ 1915 թ. հունիսի 24-ին Ադանայից ստացված հեռագրով նա տեղեկանում է, որ վտանգի առաջ է կանգնել եւ տեղահանվել նաեւ Սսի Մայրավանքի եպիսկոպոսաց դասը։ Կաթողիկոսը հաջորդ օրն իսկ դիմում է Հալեպում

---

[37] *Ն. տ., էջ 338։*

[38] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2033, թ. 18 շրջադարձ։*

[39] «Геноцид армян в Османской империи», с. 290–292.

գտնվող Ա. Ջեմալ փաշային՝ պարզաբանում պահանջելով։ Նա բացատրում է, որ թուրքական բոլոր սուլթանների օրոք հայկական վանքերը միշտ հարգանքի առարկա են հանդիսացել եւ «փափկութեամբ» հայտնում իր ցավը, որ «դարերէ ի վեր հաստատուն հոգեւոր կեդրոնի մը քանդումը տեղի կունենայ՝, հակառակ մեր անկեղծ հաւատարմութեան...» եւ «այս ծանր հարուածը խնայուի մեզի...»[40]։

Սակայն Սահակ Բ. էական արդյունքի չի հասնում, որովհետեւ շուտով Գյուտը եւս աքսորվում է։ Այս անհուսալի կացության մեջ նա գրում է. «Մնա՛ բարեա՛ւ, ութ հարիւր տարիներու Կաթողիկոսական աթոռ ու պատմական Ս. Սոփիա...»[41]։

Մինչեւ տեղահանությունը Սիսում պահվում էր մոտ 1000 գրչագիր[42], որոնցից մոտ 600-ը պահվում էր վանքում[43] եւ 823 կտոր եկեղեցական թանկարժեք ու ոչ թանկարժեք սպասներ։

1915 թ. սեպտեմբերի 13-ին վանքի բանալիները հանձնվեցին թուրքերին, իսկ հաջորդ օրը՝ առավոտյան, միաբանությունը՝ Խաչ վրդ. Աջապահյանի գլխավորությամբ հեռացավ Մայրավանքից՝ իր հետ վերցնելով վանքի գանձերը՝ 9 սնդուկների եւ 3 ծրարների մեջ ամփոփված։ Ոչ թանկարժեք իրերը պահվեցին Հալեպում, իսկ Ս. Աջերը, մյուռոնի կաթսան եւ այլ թանկարժեք սրբություններ տեղափոխվեցին Երուսաղեմ[44]։

Մեծ թվով ձեռագրեր եւ այլ իրեր մնացին վանքի գաղտնարաններում[45], սակայն ձեռագրերի մի մասը ենթարկվեց ոչնչացման, որոնց թվում «խիստ թանկագին հին Աւետարան մը մագաղաթեայ եւ արծաթապատ կողքով»[46]։

Կողոպտված հնությունների շարքին անցան նաեւ Սահակ կաթողիկոս Խապայանի դրամների անձնական հարուստ հավաքածուն, որը տեղափոխվեց Կ. Պոլսի թանգարան։

Մայրավանքը վերածվեց որբանոցի՝ «դպրոց» անվան տակ, որի տնօրեն նշանակվեց իր մոլեռանդությամբ հայտնի Կյոք Ֆագը անունով մոլլան։ Նրա բողոքների հիման վրա փոշու վերածվեց Ավագ Սեղանի փառավոր, ոսկեզօծ խաչկալը, որը արգելք էր «արեւու լույսին

---

40 Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, Ժամանակակից պատմութիւն..., էջ 51։
41 Անդ, էջ 52։
42 Մ. ՔԷԼԷՇԵԱՆ, նշ. աշխ., էջ 43։
43 Ն. տ., էջ 275։
44 Ն. տ., էջ 530, նաեւ էջ 203։
45 Գ. Ծ. ՎՐԴ. ՊԱԼԱՔԵԱՆ, նշ. աշխ., էջ 342։
46 Մ. ՔԷԼԷՇԵԱՆ, նշ. աշխ., էջ 203։

ներս թափանցումին»[47]։ Վերջինս ամենայն հավանականությամբ կառուցվել էր դեռեւս Ռուբինյան թագավորության օրոք, քանի որ Ղեւոնդ Ալիշանը նշում է, որ այն շինված էր «իտալական ոճով»։

Նույն ճակատագրին արժանացավ նաեւ 200 տարվա հնության «մարմարիոնէ, քանդակազարդ, ձյունասպիտակ սլացիկ չորս սիւներու վրայ ոսկէզօծ գմբէթով, երկու կողմերու աւետարանիչներու բարձրաքանդակ խորհրդանիշներով, իսկ թիկունքին՝ թագադիր երկգլխանի արծուի դրոշով»[48] հայրապետական գահը։ Այն «փշուր-փշուր ջախջախած էին թուրք դպրոցական տղայք՝ յանձնարարութեամբ իրենց մոլեռանդ ուսուցիչներուն»[49]։

Այս բոլոր ավերածությունները կատարվեցին «ներքին նորոգությունների» անվան տակ։ Ավագ խորանը վերածվեց ճաշարանի, իսկ գավիթը դարձավ լվացարան։ Մի ուրբաթ օր էլ վանքը հորջորջվեց «ենի ջամի» («նոր մզկիթ».– Վ. Հ.), եւ քրիստոնեական հինավուրց տաճարի տանիքից լսվեց մոլլայի ձայնը։

Բարեբախտաբար, Սահակ կաթողիկոսը Հալեպում եւ Երուսաղեմում եղած ընթացքում կարողացավ համոզել Ջեմալ փաշային, որ վերականգնվի կաթողիկոսության իրավունքը Մայրավանքի նկատմամբ։ Այդ պատճառով էլ Եղիշե արք. Կարոյանը 1916 թ. հունիսի 16-ին հատուկ թույլտվությամբ վերադարձավ Սիս, տեր կանգնեց վանքի կալվածքներին եւ վերականգնեց Հայ Եկեղեցու իրավունքները։ Սակայն վանքն այդպես էլ չկարողացավ իրեն վերագտնել։

Ժամանակակիցների վկայությամբ Զեյթունի ապստամբության օրերին Սիսի Սահակ կաթողիկոսից ստացվում է մի չարաբաստիկ հեռագիր, որը նախապատրաստվել է Սիրիայի բանակի հրամանատար Ջեմալ փաշայի դրդմամբ։ Երիտասարդ թուրքերի այս պարագլուխը շատ լավ գիտեր, որ Կիլիկիայում կուտակված է ստվար մի հայություն, որի մեծ մասը պատրաստ էր հարկ եղած դեպքում զենքը ձեռքին մինչեւ արյան վերջին կաթիլը պաշտպանել իր ժողովրդին եւ իր ընտանիքի պատիվը։ Այդ պատճառով նա համոզում է կաթողիկոսին անել ամեն ինչ, որ Զեյթունի, Հաճընի եւ Կիլիկիայի այլ վայրերի հայերը կատարյալ հնազանդություն ցուցաբերեն թուրքական կառավարության կողմից ձեռնարկված բոլոր միջոցառումներին։ Ինչ խոսք, Կիլիկիայի հայությանը տեղահան անելու

---

[47] *Անդ, էջ 200–201։*

[48] *Ն. տ., էջ 537։*

[49] *Գ. Ծ. ՎՐԴ. ՊԱԼԱՔԵԱՆ, Նշւ. աշխ., էջ 342։*

իր դիվային ծրագիրը կենսագործելու ընթացքում նա միաժամանակ սին խոստումներ էր տալիս «օգնութիւն եւ պաշտպանութիւն Կիլիկիոյ տեղահան եղած ժողովուրդին, եթէ հարկը պահանջէ»[50]։

Այս տեղեկությունը հաստատված է ժամանակակիցների հուշերով։ Այսպես, դեպքերի ժամանակակից Հովսեփ Բշտիկյանը նշում է, որ «Սահակ Խաբայանը, որն այդ ժամանակ Կիլիայի թեմի կաթողիկոսն էր, գրավոր ուղերձ է ուղարկել (պատնեշավորված դասալիքներին)՝ ասելով. «Աստծու սիրույն, խիղճ ունեցեք. ձեր զենքերն ուսերիդ մի՛ առեք, հանձնվե՛ք»։ Նա նույնիսկ հասավ Զեյթուն։ Մենք՝ բոլորս այդ ժամանակ դպրոցական էինք, մեզ բերեցին նրա հետ հանդիպելու։ Նա բնակչությանը հանգստացրեց՝ մեզ խոստանալով եւ համոզելով, որ ամեն բան լավ է վերջանալու, եւ դա է պատճառը, որ Զեյթունի բնակչությունը չգնաց կռվելու»[51]։

Ըստ ժամանակի գերմանացի լրագրող Թիզսկայի՝ այդ դեպքերի ժամանակ հայերի պատրիարքն ինքն է այցելել Թալեաթ փաշային, եւ ներքին գործերի նախարարը նրան ասել է, որ «շատ գոհ է (այդ հարցում) Զեյթունի հայերի վարքից»[52]։

Այդ է պատճառը, որ զեյթունցիներին ապակողմնորոշելուց հետո Ս. Խապայանը «...կը յորդորէ Ճեմալ փաշայի հրամանը իր բոլոր թեմերուն, եկեղեցւոյ պաշտօնեաներուն միջոցաւ, եւ մասնաւոր եկեղեցականներ կը ղրկէ Զէյթուն, Հաճըն, Տէօրթ Եօլ, որպէսզի կացութեան բացառիկ դժուարութիւնները հաղորդեն ժողովրդին»[53]։

Ամեն անգամ իր նամակներում նա մատնանշում էր. «հիմա միայն բացարձակ հնազանդութեամբ է, որ պիտի կրնանք ապրել մեր արդարասէր եւ հպատակասէր կառավարութեան հետ»[54], առանց հասկանալու, որ իր անգեն հոտը հանձնում էր զինված գայլերին, որ միեւնույնն է, թուրքական կառավարությունը հայակործան իր քաղաքականությունից հրաժարվողը չէ։

Նման փաստարկները հիմք են հանդիսացել, որ մի շարք հեղինակներ Ս. Խապայանի վարքագիծը բնութագրեն որպես միամտություն, եւ կույր հավատ երիտթուրք գործիչների նկատմամբ։ Այդ առումով միանգամայն

---

[50] *«1915. Աղէտ եւ վերածնունդ», Փարիզ, 1952, էջ 29։*

[51] *Հովսեփ Բշտիկյանի հուշերի համար տե՛ս* http://ermeni.hayem.org/turkuvkayutyun.php?tp=ea&lng=tr&nmb=138*։*

[52] Թ. Աքչամ, *Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը եւ էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երեւան, 2015, էջ 223*

[53] *«1915. Աղէտ եւ վերածնունդ, էջ 29։*

[54] *ՄԱՄ, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 240 ա, վավ. 75, էջ 113։*

դիպուկ է Ռ. Գասպարյանի այն պնդումը, երբ նշում է, որ Զեյթունի սպիտակ դրոշ պարզելու մեջ մեղքի իր մեծ բաժինն ունի Սահակ կաթողիկոսը, որը երկյուղում էր, թե զեյթունցիների անհնազանդության դեպքում տեղահանության վտանգը կսպառնա իր ողջ համայնքին[55]*։*

Անկասկած է, որ Զեյթունի եւ կիլիկյան հայաշատ մյուս կենտրոնների հայերը պիտի գերադասեին զենքը ձեռքին մինչեւ վերջ մարտնչել, եթե միայն կարողանային ըմբռնել արեւմտահայության գլխին կախված բնաջնջման վտանգն իր ամբողջ ահավորությամբ։ Տ. Անդրեասյանը նշում է, որ զեյթունցիները «...եթէ գիտնային թուրք կենտրոնական կառավարութեան սոյն դժոխային որոշումը՝ պիտի նախընտրէին անշուշտ՝ տեղւոյն վրայ դիմադրել մինչեւ վերջ, եւ մեռնիլ հերոսաբար»[56]*։ Այդ առավել պերճախոս երեւում է Ֆնտըճագ հայաբնակ գյուղի օրինակով։ Սակայն այս հարցում զգացնել տվեց Սահակ կաթողիկոսի բացասական դերը։ Նա որոշ չափով տեղեկացված էր կոտորածների մասին եւ իր անհարկի հորդորներով փաստորեն ապակողմնորոշեց կիլիկիահայությանը եւ ամլության մատնեց նրա դիմադրական շարժումը*[57]*։*

Իրականում, Սահակ կաթողիկոսն զգուշավոր եւ քաղաքականությունից հեռու կանգնած մի հոգեւորական էր, որը կարճ ժամանակից հետո միայն հասկացավ հայ ժողովրդի գլխին եկած ամբողջ ողբերգությունը։

Արդյունքում, կիլիկիահայության տեղահանություններից զերծ չմնաց նաեւ Սահակ Բ. Խապայանը, որին շուտով նույնպես առաջարկվեց թողնել իր նախորդների դարավոր աթոռանիստը՝ Սիսը, եւ տեղափոխվել Հալեպի գավառակներից մեկը եւ սգալ իր հոտի հետ պատահած զարհուրելի եղելությունը։

РЕЗЮМЕ

В статье должным образом рассматриваются исторические события конца 19-го начала 20-го вв. происшедшие в Киликии и близлежащих районах, где

---

[55] Ռ. Գասպարյան, *Հոդվածների եւ հրապարակումների ժողովածու, Երեւան, 2013, էջ 73։*

[56] Տ. Անդրեասյան, *Զեյթունի տարագրութիւնը եւ Սուեսիոյ ապստամբութիւնը, Հալեպ, 1935, էջ 21։*

[57] *Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս* Հ. Պողոսյան, *Զեյթունի պատմությունը 1409–1921 թթ., Երեւան, 1969, էջ 391–392, նաեւ* Շ. Թորոսյան, *Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919–1920 թթ., Երեւան, 1987, էջ 51։*

испокон веков подавляющее большинство населения составляли армяне. Опираясь на исторические факты, архивные материалы и научные исследования, автор воссоздает всеобъемлющую картину исследуемого периода, указывая на политические просчеты армянской стороны, которые в большинстве своем были результатом излишней доверчивости.

SUMMARY

This article discusses the events that took place at the end of the 19th and the beginning of the 20th century in Cilicia and neighboring districts, where the greatest part of the population were Armenians. The author, basing his studies on archive materials, scientific researches and historical facts and reconstructing a comprehensive image of the investigated period, mentions that the political mistakes of the Armenians were results of unwarranted trustfulness.